ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

№ 16/174293-23 «26» դեկտեմբերի 2023թ.

«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

/Ք. ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍԻ 16, ԲՆ. 22/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ Ա. Հովհաննիսյան,

Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/122-3 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի թիվ 95 մանկապարտեզի բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի 1.2 կետով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը աշխատանքների կատարման համար սահմանելով մինչև սույն թվականի դեկտեմբերի 18-ը ժամկետ՝ 14.12.2023 թվականին «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին է հասցեագրել թիվ 16/229154-23 գրությունը՝ Պատվիրատուին նախագծանախահաշվային աշխատանքների ողջ փաթեթը հանձնելու վերաբերյալ, միաժամանակ նշված գրությամբ վերջինս իրազեկվել է պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի դրույթի մասին:

18.12.2023 թվականի թիվ Ե-18/12-1 գրությամբ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ աշխատանքային նախագիծը և նախահաշիվը էլեկտրոնային տարբերակով 18.12.2023 թվականին ուղարկվել է Պատվիրատուի /shin-barekargum@mail.ru/ էլ. հասցեին:

Արդյունքում Կատարողի կողմից թույլ է տրվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջների խախտում, այն է՝ յուրաքանչյուր մասի համար նախագիծը պետք է ներկայացնել 6-ական օրինակից, նախահաշիվը՝ 3-ական, նաև էլ. տարբերակով:

Բացի այդ, պաշտոնական է համարվում shin-barekargum@yerevan.am էլ. հասցեն, իսկ ներկայացված նախագծի ստուգման արդյունքում պարզվել է, որ նախագծում արտացոլված գծագրերը չեն համապատասխանում տեղանքին:

20.12.2023 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը սահմանելով եռօրյա ժամկետ՝ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին է հասցեագրել թիվ 16/234490-23 գրությունը՝ նախագիծը տեղանքին համապատասխանեցնելու և ողջ կազմով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությանն ներկայացնելու համար, այնինչ ներկայացված գրությանը որևէ պատասխան չի տրվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ **Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ** լուծում է պայմանագիրը՝ *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերերդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած

անձը վճարել է պայմանագրի որակավորման և կատարման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 225.000 ՀՀ դրամ և 150.000 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Digitally signed by
TIGRAN GEGHAMYAN 3910890377
Date: 2023.12.26 12:08:14

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Շինարարության և բարեկարգման վարչություն
հեռ. 011-514-256